

Ս. Հ. Պողոսյան

ԽԱՂՈՂԻ ՍԵԼԵԿՑԻԱՆ ՄԻՋՈՒՐԻՆՅԱՆ ՈՒՂԻՈՎ

Բիոլոգիական գիտության պատմության մեջ Ի. Վ. Միչուրինը առաջինն էր, որ իր աշխատանքներով տվեց բուսական օրգանիզմների ժառանգականության նպատակագիր փոփոխման ուղիները:

Բույսերի կյանքի զեկավարման միչուրինյան ուսմունքը, հիմնված զարգացող օրգանիզմների ու աբուսաքին միջավայրի փոխազդեցության բնույթի վրա, հեղաշրջում մտցնելով ողջ բուսաբուծության մեջ, իր գործնական կիրառումն է գտնում բիոլոգիական գիտության ու գյուղատնտեսության պրակտիկայի յուրաքանչյուր բնագավառում:

Միչուրինի ուսմունքը նոր ուղի բացեց նաև խաղողի սելեկցիոն աշխատանքների համար՝ ոչ միայն այս կուլտուրան զեպի հյուսիս տարածելու խնդրում, այլև հարավային հին այգեգործական շրջաններում տարվող սելեկցիոն աշխատանքների բնագավառում:

Պողատու կուլտուրաների նոր սորակեր ստանալու խնդրում Ի. Վ. Միչուրինը, բացի երիտասարդ օրգանիզմների դաստիարակման իր մշակած մեթոդներից, ելանյութի ընտրության հարցում ունեցած իր մատչումից, հատուկ նշանակություն էր տալիս ծնողական ձևերի յուրարմատ լինելուն, թե հիբրիդացման և թե նրանց իրը մենտոր օգտագործելու դեպքում, որպես կարևոր պայման սերնդում ավելի շատ կուլտուրական հատկություններով սերմնարույսեր ստանալու համար:

Այգեգործության մեջ մշակվող բազմամյա պողատու կուլտուրաների սերմնարույսերի հատկությունները, նրանց կուլտուրականության տեսակետից ... միշտ ղգալի չափով բարձրանում են այն զեպերում, երբ ցանքի համար սերմերը վերցվում են այնպիսի բույսերից, որոնք իրենց սեփական աղնիկ արմատներն ունեն...», — գրում է Ի. Վ. Միչուրինը*:

Յուրարմատ ելանյութի օգտագործման հարցին բազմամյա կուլտուրաների սելեկցիայում հատուկ նշանակություն է տալիս նաև Տ. Դ. Լիսենկոն, որը գրում է. «Պատվաստացուն՝ հին կուլտուրական սորտը, քիչ է ենթարկվում փոփոխման վայրակի արմատների ազդեցությանից, իսկ ապագա օրգանիզմների սաղմերը, այսինքն՝ պտուղներում կազմակերպվող սերմերը խիստ կերպով հակվում են վայրի պատվաստակալի կողմը... Մի՞թե խաղողի սելեկցիոններն էլ են եզրակացնի, որ նախքան խաչաձևելը անհրաժեշտ է ստանալ յուրարմատ մայրական բույս: Մի՞թե պողատույնները եղրակացություն չեն անի այն մասին, որ խաչաձևման համար պետք է ձգտել ունենալ յուրարմատ մայրական ծառեր...»**:

Միչուրինյան տեսության այս գրույթը խաղողի սելեկցիայի կարևոր նախադրյալներից է, մանավանդ այնպիսի շրջաններում, որտեղ վաղը դարեր ի վեր մշակվում է յուրարմատ:

* Ի. Վ. Միչուրին, Ժողովածու, հատ. 1, 1939, էջ 162:

** Տ. Դ. Լիսենկո, Նախաբան Ի. Վ. Միչուրինի ժողովածուի 1-ին հատորի, 1939:

Հայաստանի երկրագործության պատմության մեջ խաղողի վաղի մշակությունը հայտնի է մի քանի հազար տարի առաջ: Այդ ժամանակի ընթացքում ժողովրդական սելեկցիան ստեղծել է բազմաթիվ արժեքավոր տեղական սորտեր, որոնք հազարամյակներ շարունակ մշակվել են յուրարժատ: Այդ հնագույն սորտերից շատերը այժմ էլ մշակվում են ուսպուրլիկայի հին ալդեգործական շրջաններում, հատկապես Արարատյան դաշտում:

Տեղական խաղողի հնագույն արժեքավոր սորտերը, ինչպես և սովետական ժամանակաշրջանում ներմուծված եվրոպական խաղողի բավազույն սորտերից մի քանիսը ելանյութ հանդիսացան մեր սելեկցիոն աշխատանքների համար, որոնց նպատակն էր. ուսումնասիրել այդ սորտերի սերմնային սերնդի բնույթը, որը կարևոր նշանակություն ունի նպատակադիր սելեկցիայի համար, և, զեկավարվելով միջուրինյան տեսության հիմունքներով, նոր արժեքավոր սորտեր ստեղծել ազատ ինքնափոշոտումից ստացված սերմերի ցանքի, հիբրիդացման, ընտրության և զաստիարակման միջոցով:

1939 թվականից մեր սկսած այդ աշխատանքների ընթացքում ստեղծված է բավական բազմազան մեծ սելեկցիոն ֆոնդ, բաղկացած տեղական յուրարժատ խաղողի արժեքավոր հնագույն սորտերի, ներմուծված սորտերի և տարբեր ծագում ունեցող ծնողական ձևերի խաչաձևումից ստացված սերմնային սերունդներից:

Տարիների ընթացքում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ յուրարժատ խաղողի տարբեր սորտերը իրենց սերմնային սերնդում զարգացնում են մեծ բազմազանություն, ըստ արտաքին մորֆոլոգիական հատկությունների, ծաղկի տիպի, ողկույղների կառուցվածքի և մեծության, Կտղի ձևի, գույնի մեծության, սերմերի քանակի, բերքատրվության, շաքարայնության և թթվության, վեգետացիայի տևողության, ժառանգականության կայունացման տևողության և մի շարք այլ հատկությունների:

Նրանց սերմնային սերնդի փոփոխականության աստիճանը, նայած սորտի ծագմանը և հուսվածքին, տատանվում է ծնողական ձևերի վերարտադրումից սկսած մինչև ծայր աստիճան փոփոխված ձևեր, դուրս չգալով, սակայն, կուլտուրական վաղի հատկությունների սահմաններից:

Երկսեռ սորտերի ազատ ինքնափոշոտումից ստացված սերմնային սերունդը իր փոփոխականության բնույթով շատ դեպքերում նմանվում է հիբրիդային ծագում ունեցող սերնդին: Սերմնային սերնդում համեմատաբար քիչ բազմազանություն են տալիս տեղական խաղողի ավելի հնագույն սորտերը, ինչպես Ոսկեհատը, Մսխալին, Ճիլարը, Գառան-գմակը, որոնց սերմնաբույսերը իրենց հիմնական հատկություններով մեծ մասամբ վերարտադրում են մայրական ձևերը:

Ավելի նոր ծագում ունեցող սորտերը սերմնային սերնդում զարգացնում են մեծ փոփոխականություն ըստ բոլոր հատկությունների:

Սակայն բազմազանության բոլոր դեպքերում, անկախ ծագումից և փոփոխականության աստիճանից, յուրարժատ խաղողի հնագույն սորտերը սերմնային սերնդում զարգացնում են կուլտուրական վաղի հատկություններ ունեցող սերմնաբույսեր, թե՛ ըստ արտաքին տեսքի և թե՛ ըստ ծաղկի տիպի, ողկույղների և պտուղների. մեծության, համի, որակական հատկա-

նիշներին, մանավանդ սերմնարույսի զարգացման ավելի ուշ շրջանում: Ուսումնասիրության տակ առնված յուրարմատ խաղողի հնագույն սորտերի սերմնային սերնդում չեն զարգանում վայրի վազին հատուկ արական ծաղիկներով սերմնարույսեր, բացառությամբ այն գեղքերի, երբ մայրական սորտերի մշակության շրջապատում կան վայրի վազեր (օրինակ՝ Հաստակոթի և Սրնիկի մոտ — Մեղրու շրջանից):

Վազի փոփոխականությունը սերմնային սերնդում գրականության մեջ բացատրվում է նրա սկզբնական հետերոզիգոտ ծագումով, որը մեր կարծիքով բնահանուր բացատրություն է. բոլոր այդ տեսակետի, ստացվում է, որ սկսած այն օրից, երբ մարդը փոխել է վազի բազմացման ձևը (բնության պայմաններում սերմնային ճանապարհով բազմացման ձևից՝ վեգետատիվ բազմացում կուլտուրայի մեջ), նրա ժառանգականությունը հոլարմաձակների բնթացքում պետք է «անփոփոխ» պահպանվեր մինչև վազը նորից սերմերով բազմացնելը: Հետևապես, հնագույն սորտերի այժմյան սերմնային սերնդի փոփոխականության բնույթը պետք է լիներ այնպիսին, ինչպիսին դա կլիներ հոլարմաձակներ, առաջ՝ վազը վայրի բնությունից կուլտուրայի մեջ մտցնելու սկզբնական ժամանակաշրջանում:


Սակայն, ինչպես ցույց տվեցին մեր աստվածաբանությունները, յուրարմատ խաղողի հնագույն սորտերի սերմնային սերնդում վայրի խաղողի հատկությունները չեն զարգանում, բնականապես, նրանց սերմնարույսերն օժտված են միայն կուլտուրական վազի հատկություններով:

Հիմնականում չվստելով կուլտուրական վազի հետերոզիգոտ ծագումը, կարելի է ասել, որ վազի պրոդուկտիվ զարգացումն ընթացել է ոչ միայն սեռական բազմացման ճանապարհով. այստեղ պայմանի գեր է խաղացել մարդու կողմից տարվող սխտեմասիկ բնարությունն ու բնորոշ կրոնների վեգետատիվ յուրարմատ բազմացումը մշակության անբնական լավացման պայմաններում, որոնց ազդեցությունը դարերի ընթացքում հիմնովին փոխել է վազի սկզբնական հետերոզիգոտ բնույթը: Այն բոլոր փոփոխությունները, որ վազը կրել է իր երկարատև վեգետատիվ բազմացման ընթացքում արտաքին պայմանների ազդեցության տակ կուլտուրայի մեջ, պետք է զարգանային նրա սերմնային սերնդում, որի արտահայտությունն է այդ սորտերի այժմյան սերնդի մեծ բազմազանությունը և կուլտուրական վազի հատկություններով սերմնարույսերի զարգացումը:

Յուրարմատ խաղողի հնագույն սորտերի սերմնային սերնդի մեծ բազմազանությունը, նրանց սերմնարույսերի՝ կուլտուրական հատկություններով և անտեսական արժեքավոր հապանիչներով օժտված լինելը լայն հնարավորություններ են ստեղծում բնարության և նոր արժեքով սորտեր առաջացնելու համար:

Մեր աշխատանքներում այսպիսի օրինակ կարող են լինել Հրազդանի ու Տոկուսի սեղանի խաղողի նոր սորտերը և գինու խաղողի մի շարք արժեքավոր սերմնարույսեր, որոնք ստացել ենք տեղական ու ներմուծված սորտերի սերմերի ցանքից՝ բնարության և լավ խնամքի պայմաններում դաստիարակելու միջոցով:

Հետանկարային սերմնարույսերից հատուկ ուշադրության են արժանի Ոսկեհատ № 7/3, Կողբինի № 81/11, Լալվարի № 62/5, Թավիկերի սորտի



Նկար 3. Սերմնարույն № 7 B: Ստացված է Ոսկեհատ սորտի սերմերի ցանքից: Բազմացվում է որպես զինուռ խաղողի ապագա բարձր բերքատու նոր սորտ:




Նկար 4. Սերմնարույն № 81.11: Ստացված է Կոզլենի սորտի սերմերի ցանքից: Բազմացվում է որպես զինուռ խաղողի ապագա սորտ: Արարատյան գաղտնավայրի պայմաններում բարձր բերքատվության հետ ունի նաև բարձր թիվով թյուն:

Հրազդանի սորտի սղիռայրը
($\frac{1}{3}$ բնական մեծությամբ)



Гроздь сорта Раздани
(в $\frac{1}{3}$ натуральной величины)



Նկար 5. Սերմնարույս № 62/5: Ստացված է Լավարի սորտի սերմերի ցանքից:

№ 44/2, երկսեռ ծաղիկներով, Ֆուրմինտի № 73/3 և Մուսկատի № 75/19 սերմնարույսերը, սրանք հարավի պայմաններում, բարձր չափաբաժնությամբ համախառն, ունեն նաև բարձր թվով թյուն, որը շատ կարևոր է հարավային շրջանների գինեգործական արդյունաբերության համար: Մուսկատ սորտի սերմնարույս № 75/19-ը, բացի մի չափ արմեքավոր հատկություններից, պտուղների ուժեղ մուսկատային արոմատով գերազանցում է նույն պայմաններում մշակվող Մուսկատային սորտերին:

Մեր սելեկցիոն աշխատանքներում մեծ տեղ է գրավում նաև յուրարմատ խաղողի հիրբիդային սերնդի փոփոխականության ուսումնասիրությունը, կապված ծնողական ձևերի սերմնային սերնդի ժառանգականության ու փոփոխականության բնույթի հետ, ինչպես և սերմնարույսերի անհատական զարգացման բնույթի ուսումնասիրությունը:

Ցուրարմատ խաղողի հիրբիդային սերմնարույսերը, ինչպես և պետք էր սպասել, օժտված են ավելի մեծ փոփոխականությամբ և, ծնողական ձևերի սերմնային սերնդի նման, ունեն կուլտուրական խաղողի հատկություններ: Այս կամ այն հատկության զարգացման աստիճանը հիրբիդային սերմնարույսերի մոտ, ինչպես և փոփոխականության բնույթը անհատական զարգացման բնթացքում, պայմանավորվում է ծնողական ձևերի ծագումով, նրանց կուլտուրայի մեջ լինելու տևողությամբ և զարգացման ներկա պայմաններով:

Զարգացման միևնույն պայմաններում որոշ սերմնարույսերը պտղաբերման առաջին իսկ տարում զարգացնում են բարձր բերքատվություն և այդ հատկությունը պահպանվում է թե՛ սերմնարույսի բերքատվության հաջորդ տարիներում և թե՛ նրա վեգետատիվ սերնդում, որոշակի հակում ունենալով դեպի բերքատվության ավելի բարձրացում: Որոշ սերմնա-

Տնտեսապես արժեքավոր հատկությունների կայունացումը խաղողի սերմնարույսերի մոտ անհատական զարգացման ընթացքում


Սերմնարույսեր	Սերմնարույսի տարիքը	Մեկ վաղի ընթացքը	Սերմնարույսի զանգվածը	100 պտղի կշիռը գ-ով	Շաքարի ու թթվության քանակը պտուղներում		
					Շաքարի քանակը	Թթվությունը	Խտությունը
Կարմիր կախանի № 1/4 սերմնարույս	1-ին 3-րդ	2,250 5,750	143 221	256 275	10 IX 13/IX	16,08 19,20	4,9 4,9
Կարմիր կախանի № 1/4 սերմնարույսի վեղետատիվ սերունդը	3-րդ	7,200	343	400	10/IX	23,54	4,2
Սպիտակ Արարսենու № 8/12 սերմնարույս	1-ին 3-րդ	2,680 6,256	287 298	230 242	15/IX 18/IX	23,80 22,88	3,7 5,8
Սպիտակ Արարսենու № 8/12 սերմնարույսի վեղետատիվ սերունդը	3-րդ	10,800	292	350	20/IX	24,70	3,5
Ոսկեհատ № 7/28 սերմնարույս	1-ին 3-րդ	2,370 5,650	180 264	216 260	28/IX 15/IX	18,82 18,0	4,4 4,8
Ոսկեհատի № 7/28 սերմնարույսի վեղետատիվ սերունդը	3-րդ	8,700	272	320	19/IX	22,9	4,7
Ոսկեհատ № 7/43 սերմնարույս	1-ին 3-րդ	1,680 6,750	151 246	178 216	15/IX 6/X	19,76 20,80	8,2 4,8
Ոսկեհատ № 7/43 սերմնարույսի վեղետատիվ սերունդը	3-րդ	12,100	279	266	26/IX	20,20	4,0
Թապառուկ X Վարդաղույն նրանի	1-ին 3-րդ	2,500 6,670	337 416	434 524	22/IX 11/X	17,92 20,12	4,1 2,4
Թապառուկ X Վարդաղույն նրանի վեղետատիվ սերունդը	3-րդ	11,840	592	554	20/IX	22,8	2,5

բույսերի մոտ էլ պտղաբերումը սկսվում է ցածր բերքով, հետագայում, ըստ տարիների, կապված սերմնարույսերի հասակի հետ, աստիճանաբար բարձրանում է նրանց բերքատվությունը: Շատ քիչ դեպքերում զարգանում են աշխարհի սերմնարույսեր, որոնք իրենց պտղաբերման առաջին իսկ տարվանից ունենում են ցածր բերքատվություն, որը պահպանվում է բերքատվության հետագա տարիներում, նաև վեղետատիվ սերունդում, մինչև անգամ բարձր ազդեցությունից պայմաններում:

Սերմնարույսերի անհատական զարգացման ընթացքում, ժառանգականության կայունացման պրոցեսում, ըստ բերքատվության տարիների աստիճանաբար լավանում են նրանց տնտեսապես արժեքավոր հատկությունները, խոշորանում են պտուղները, լավանում է նրանց համր: Բերքի



Նկար 6. Սերմաբույս M 720/18: Ստացված է Արմենիա և Վարդապույն Երևանի սորտերի խաչաձևումից: Բաղմացվում է որպես սեղանի խաղողի ապագա նոր սորտ՝ վարդապույն պտուղներով, բարձր քերքատվությամբ և որակական զուգանիշներով:



Նկար 7. Սերմնարույս № 719/12: Ստացված է Արմենիա և Նապեյի սորտերի խաչածնումից, բազմապիսում է որպես սեղանի խաղողի ապագա նոր սորտ՝ խոշոր պտույններով, կիսազարգացած սերմերով:



Նկար 8. Սերմնարույս № 780/1: Ստացված է Բանոնց և Ճիլար սորտերի խաչածնումից: Բազմապիսում է սրպես դինու խաղողի ապագա նոր սորտ:

քանակի ավելացումը սերմնաբույսերի զարգացման ընթացքում, ըստ բերքատվության տարիների, բացասաբար չի ազդում պտուղների մեծանալու և որակի լավանալու վրա, և նրանց վեգետատիվ սերունդը այդ հատկությունով շատ ավելի գերազանցում է իրեն՝ սերմնաբույսին (տես աղ. 1)։ Տնտեսապես արժեքավոր հատկությունների լավացումը սերմնաբույսերի անհատական զարգացման ընթացքում, ինչպես և նրանց վեգետատիվ սերունդում, պայմանավորվում է առավելապես լավ խնամքով՝ բերքատվության առաջին իսկ տարիներից։

Ի. Վ. Միչուրինը նշում է, որ երիտասարդ սերմնաբույսերի մոտ արժեքավոր հատկությունների ձևավորման ու կայունացման խնդրում դաստիարակման կարևոր պայմանը բույսի սնման ռեժիմի և բերքի քանակի համաչափության ապահովումն է հատկապես բերքատվության առաջին տարիներում։ Ելնելով այդ դրույթից, մեր փորձում բերքատվության առաջին իսկ տարում աչքի ընկնող բերքատու և որակով բարձր սերմնաբույսերի նկատմամբ տարվում էր հատուկ խնամք, նպատակ ունենալով համաչափություն պահպանել սերմնաբույսի բիոնոմոթյունի և սննդի պայմանների միջև։ Երիտասարդ սերմնաբույսերի մոտ բերքի քանակի, աճեցողությունից ուժի և սնման պայմանների միջև համաչափության պահպանումը ժառանգականության կայունացման ընթացքում, ոչ միայն նպաստում է նրանց որակի լավացմանը, այլև զարգացնում է նրանց մեջ բարձր բերք տալու ընդունակությունը՝ որպես ժառանգական հատկություն, որը պահպանվում է նաև նրանց վեգետատիվ սերունդում։

Բարձր ազդեցություն խնամքը սերմնաբույսերի ժառանգականության կայունացման ընթացքում ամենադործուն միջոցներից է նաև առաջացող նոր սորտերի հղման, հատկապես նրանց բերքատվության բարձրացման, ուղղվածների ու պտուղների խոշորացման և որակի լավացման համար։

Այդպիսի դաստիարակման արդյունք են մեր փորձերում ստացված մի շարք արժեքավոր սերմնաբույսեր՝ № 15/16-ը Ոսկեհատ × Սպիտակ Սաթկենի, № 777/4-ը Արագածի × Սպիտակ Արաքսենի, № 720/18-ը Արմենիա × Վարդագույն Երևանի, № 733/10-ը Ամբարի × Իմպատուկ, № 780/1-ը Բանանց × Ծիլար, № 774/3-ը Թավրիզենի × Նազելի, № 719/12-ը Արմենիա × Նազելի, որոնք բազմացվում են որպես հեռանկարային սերմնաբույսեր՝ նրանցից սեղանի և գինու նոր սորտեր ստանալու նպատակով (նկար 6, 7, 8, 9)։

Հիբրիդային սերմնաբույսերի մոտ հաճախ նկատվում են նաև վեգետատիվ փոփոխականության դեպքեր, որոնք արտահայտվում են տարբեր գույնի պտուղների զարգացմամբ մեկ ուղղված խոշորաներում, կամ միևնույն սերմնաբույսի տարբեր շվերի վրա տարբեր գույնի ու ձևի պտուղներով ուղղվածների զարգացմամբ և այլն։

Այսպիսով, խաղողի սերմնաբույսերը, որոնց ժառանգական հիմքը խախտված է ծնողական ձևերի երկարատև վեգետատիվ բազմացումից հետո նորից սերմնային ճանապարհով բազմացնելու հետևանքով, զարգացնում են մեծ փոփոխականություն թե՛ սերնդի սահմաններում և թե՛ իրենց անհատական զարգացման ընթացքում։

Սերմնաբույսերի այդպիսի փոփոխականությունը լայն հնարավորու-

թյուններ է տալիս նաև մենտորի ազդեցության տակ նրանց նպատակադիր դաստիարակման համար:

Երիտասարդ սերմնարույսերն իրենց զարգացման սկզբնական շրջանից յուրարմատ խաղողի արժեքավոր սորոտերից վերցված մենտորի ազդեցության տակ դաստիարակելու ուղղությամբ մեր կատարած փորձերն իրենց գրական արդյունքները տվեցին թե՛ որոշ տեսական հարցերի լուծման և թե՛ խաղողի նոր սորտ ստանալու տեսակետից: Դաստիարակման համար, որպես պատվաստացու, վերցվել են տեղական խաղողի և տեղական ու ամերիկյան խաղողների խաչաձևումից ստացված երիտասարդ՝ դեռ բերքի չեկած հիբրիդային սերմնարույսերի մի աչքանի կտրոնները և պատվաստվել տեղական յուրարմատ խաղողի արժեքավոր սորոտից վերցված պատվաստակալների վրա:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ մենտորի ազդեցությանն ալելի հեշտ են եսթարկվում կուլտուրական խաղողի սերմնարույսերը, որոնց մոտ զարգացման ընթացքում որոշակի փոփոխություններ են նկատվում ողկույզների մեծության, պաշի ձևի, գույնի, մեծության, սերմերի քանակի և այլ հատկությունների մեջ, նայած մենտորին:

Ինչ վերաբերում է տեղական և ամերիկյան խաղողների խաչաձևումից ստացված սերմնարույսերին, որոնք իրենց արտաքին մորֆոլոգիական հատկանիշներով նմանվել էին վայրի խաղողին, դաստիարակման բոլոր դեպքերում հիմնականում պահպանեցին վայրի խաղողի հատկությունները և հետագա զարգացման ընթացքում փոփոխության չենթարկվեցին կուլտուրական մենտորի ազդեցության տակ:

Կուլտուրական խաղողի երիտասարդ սերմնարույսերը յուրարմատ խաղողի բարձրորակ սորոտերից վերցված մենտորի վրա դաստիարակելու դեպքում, շնորհիվ նրանց փոփոխական բնույթի, ալելի լավանում են նրանց տնտեսապես արժեքավոր հատկությունները: Կարող է թվալ, որ այդպիսի մոտեցումը հակասում է Ի. Վ. Միչուրինի կողմից քաղվելից արված ցուցումներին, որոնց համաձայն, նա մեծականապես դեմ էր պտղատու կուլտուրաների երիտասարդ սերմնարույսերը մեծահասակ ծառերի վրա պատվաստելուն, որի դեպքում մեծ մասամբ վատանում են սերմնարույսի հատկությունները: Պետք է հաշվի առնել, որ Ի. Վ. Միչուրինը նկատի ուներ կուլտուրական սորոտերի ծառերը, որոնք սովորաբար պատվաստված են լինում վայրի պատվաստակալների վրա: Տվյալ դեպքում հարցը վերաբերում է յուրարմատ խաղողի կուլտուրական սորոտերից վերցված պատվաստակալներին, ուստի և վայրի պատվաստակալի բացասական ազդեցության հարցը (որպեսին լինում է պտղատուների մոտ) ինքնըստինքյան վերանում է: Մինչև անգամ կարելի է ասել, որ խաղողի սերմնարույսերի մոտ, որոնց ժառանգականությունը դեռ կաշունացած է, նրանց զարգացման սկզբնական շրջանում սեփական արմատային սիստեմը որոշ չափով կասեցնում է կուլտուրական հատկությունների զարգացումը, քանի որ արագաճող երիտասարդ հյուսվածքները գտնվելով հողի մեջ, չեն անցնում իրենց զարգացման որակական փոփոխությունները, ինչպես այդ հատուկ է բույսի վերերկրյա մասին, ուստի և մասամբ մնում են վայրի վազի հատկություններով:

Սերմնարույսերի վաղ անջատումը իրենց սեփական արմատային սիս-

տեմից և նրա սլառավաստումը կուլտուրական յուրարմատ խաղողի բարձրորակ սորտերից վերցված պատվաստակալների վրա իր գրական ազդեցությունն ունի սերմնարույսի մեջ լավագույն հատկությունների արագ զարգացման տեսակետից: Չենք կարող հաշվի չառնել յուրարմատ խաղողի այն արժեքավոր կողմը, որ սերմնային սերնդում նա զարգացնում է կուլտուրական խաղողի հատկություններ: Եթե մեզ հայտնի են մենտորի ազդեցության հնարավորությունները, ապա, իմանալով դաստիարակման համար վերցված ելանյութը, մենտորի և կոմպլեքս ագրոմիջոցառումների կիրառման միջոցով որոշակի կերպով կարող ենք ուժեղացնել ցանկալի հատկությունների զարգացումը սլառավաստված սերմնարույսերի մոտ, կամ կանխել անցանկալի հատկանիշների զարգացումը:

Մնողական ձևերի և մենտորի ճիշտ ընտրությունը հնարավորություն է տալիս երիտասարդ սերմնարույսերի մեջ զարգացնել նոր հատկություններ, իսկ ծնողական ձևերի օգտագործումը նաև որպես մենտոր, հնարավորություն է տալիս հարկ եղած դեպքում սերմնարույսի մեջ զարգացնելու տվյալ ծնողի հատկությունները, ինչպես այդ տեղի է ունենում կրկնակի խաչաձևումների ժամանակ:

Այդպիսի դաստիարակման արդյունք են մեր առաջացրած Արմենիա, Արագածի և Վարդենի սեզանի խաղողի նոր սորտերը: Վերջին երկուսը իծապտուկ $\times$ Վարդագույն երևանի միենույն հիբրիդային սերմնարույսից են առաջացել, սակայն վաղ հասակից դաստիարակվել են տարբեր մենտորների ազդեցության տակ. Վարդենին՝ հայրական սորտից վերցված պատվաստակալի վրա, Արագածին՝ կողմնակի մենտորի՝ Արարատի սորտի պատվաստակալի վրա, որի հետևանքով ունեն տարբեր հատկություններ:

Առաջացած նոր սորտերը և հետանկարային արժեքավոր սերմնարույսերը բազմազվում են արտադրության պայմաններում, ուսպուրլիկայի տարբեր շրջաններում, նպատակ ունենալով որոշելու նրանց բնույթին համապատասխանող միկրոոայոնները գլխավորապես խաղողի այգիների համար նոր յուրացվող հողերի գոտում:

Ծավալուն աշխատանք է տարվում նաև խաղողի վաղահաս սորտեր ստանալու և վաղից ցրտադիմացկունությունը բարձրացնելու ուղղությամբ, նպատակ ունենալով ստանալ այնպիսի սորտեր, որոնք հնարավոր զարձնեն վաղի թաց մշակությունը Արարատյան գաղափարի պայմաններում և այդ կուլտուրայի տարածումը ուսպուրլիկայի բարձրագույն շրջաններում:

Այդ աշխատանքները տարվում են ծնողական ձևերի ընտրության և երիտասարդ սերմնարույսերը համապատասխան արտաքին պայմաններում դաստիարակելու միջոցներից սկսած հայտնի սկզբունքներով: Ուստի այդ նպատակով ստեղծված հիբրիդային սերմնարույսերը, նրանց զարգացման սկզբնական շրջանից սճեցնում ենք Հայաստանի նախալեռնային և լեռնային շրջանների մի քանի բարձրագույն վայրերում, որտեղ բույսի վեգետացիայի համար ամռան տեղությունն ավելի կարճ է և տարեկան միջին ջերմաստիճանը շատ ավելի ցածր է, քան ցածրագույն շրջաններում, իսկ ձմեռը՝ անհամեմատ ցուրտ:

Երիտասարդ սերմնարույսերի դաստիարակումն այդպիսի կլիմայական պայմաններում իրենց զարգացման սկզբնական շրջանից, նպատակ է

Արաղածի սորաի ողկույղը
($\frac{1}{3}$ բնական մեծությամբ)



Гроздь сорта Арагац
(в $\frac{1}{3}$ натуральной величины)

Վարդենի սորտի աղիւտ լիւր
 (1/2 բնական մեծութեամբ)



Гроздь сорта Вардени
 (в 1/2 натуральной величины)

վաղահասության և ցրտադիմացկունություն չափերի զարգացման և ժառանգականորեն կաշտնացմանը նրանց մեջ:

Այս ուղղությամբ ստացված առաջին արդյունքները հիմք են տալիս առելու, որ սանգոմագործներն կիրառելով միջուրինյան ուսման և սկզբունքը, միանգամայն հնարավոր է լուծելու վաղի ցրտադիմացկունության բարձրացման ինչպես և այլ կուլտուրան ավելի բարձրագույն շրջաններում տարածելու հարցը հարավի պայմաններում:

Հայկական ՍՍՏ Գիտությունների
ակադեմիայի Խաղողագործության
և գինեգործության ինստիտուտ:

Ստացվել է 26, XI 1955 թ.:

С. А. Погосян

Селекция винограда по мичуринскому пути

Р е з ю м е

В статье дается краткое изложение результатов работ по изучению природы семенного потомства стародавних сортов корнесобственного винограда при семенном их размножении от свободного самоопыления, различных комбинаций скрещивания, при различных методах воспитания, на основе учения И. В. Мичурина об управлении жизнью растительных организмов.

Применяя мичуринские методы сортовогоыведения с использованием корнесобственного исходного материала, чему И. В. Мичурин придает особое значение как необходимому условию для получения качественных культурных семян, из числа плодоносящего селекционного фонда, выведены новые сорта и ряд перспективных семян столового и винного винограда.

Путем высева семян от свободного самоопыления местных сортов корнесобственного винограда, отбора и воспитания выведены сорта Раздани и Токун—высокоурожайные новые сорта столового винограда (рис. 1, 2) и ряд ценных семян винного направления (рис. 3, 4, 5).

Путем гибридизации и воспитания под влиянием ментора из высококачественных сортов корнесобственного винограда, а также применением других приемов воспитания, выведены сорта Арагац, Вардени и Армения—новые сорта столового винограда, которые также отличаются высокой урожайностью, транспортабельностью, высоким качеством и особо нарядным внешним видом (рис. 9, 10, 11).

Выделен в элиту ряд ценных семян столового, столово-винного и винного направления (рис. 6, 7, 8).

Выведенные новые сорта и перспективные сеянцы размножаются в условиях производства.

Определенная работа ведется по выведению раннеспелых сортов винограда и по повышению морозостойкости виноградной лозы, с